

Ա Ր Չ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
Երևանի պետական համալսարանի
կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի
2021 թ. ապրիլի 6-ին կայացած թիվ 8 առցանց նիստի

Գիտական խորհրդի նիստն անցկացվել է հեռավար համակարգով, խորհրդի 40 անդամներից նիստին մասնակցել են 30-ը:

Օրակարգում՝

1. ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչի ընտրության հարցը:
2. ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչ, կ.գ.թ., դոցենտ Աննա Ֆելիքսի Կարապետյանի և կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. Լիլիթ Սերգեյի Գաբրիելյանի դոկտորական ատենախոսության թեմաների հաստատման հարցը:
3. ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի հայցորդ Լուսինե Գասպարյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերահաստատման և գիտական ղեկավարի փոփոխման հարցը:
4. Ընթացիկ հարցեր:

1. ԼՍԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի ղեկան, պրոֆեսոր Է.Ս. Գևորգյանի հաղորդումը՝ կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնում 1 դրույքաչափով ամբիոնի վարիչի պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ մրցութային հանձնաժողովի նախագահ, պրոֆ. Ֆ.Դ. Դանիելյանը ներկայացրեց տեղեկություններ ընտրվող թեկնածուի՝ կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. Աննա Արշակի

Փոլադյանի մասին (կից ներկայացվում է մրցութային հանձնաժողովի եզրակացությունը): Արտահայտվեցին նաև դեկանի տեղակալ, կ.գ.թ., դոցենտ Կ.Ա. Ղազարյանը, կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի դոցենտ, կ.գ.դ. Կ.Ա. Թռչունյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ գրանցել կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. Աննա Արշակի Փոլադյանին փակ (գաղտնի) քվեարկության ցուցակում՝ ամբիոնի վարիչի պաշտոնում (1 դրույքաչափ) ընտրվելու համար և փակ գաղտնի քվեարկությունն անցկացնել հեռավար:

ԼՍԵՑԻՆ՝ տեղեկություններ առցանց համակարգով անցկացրած փակ (գաղտնի) քվեարկության արդյունքների մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. հաստատել փակ (գաղտնի) քվեարկության արդյունքները, խորհրդի ներկա անդամներից քվեարկությանը մասնակցել են 28 անդամ: Քվեարկության արդյունքներն ամփոփվել են համակարգչի օգնությամբ. կողմ՝ 28, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:
2. Աննա Արշակի Փոլադյանին համարել ընտրված կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչի (1 դրույքաչափ) պաշտոնում:

2. ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչ, կ.գ.թ. դոցենտ Աննա Ֆելիքսի Կարապետյանի և կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. Լիլիթ Սերգեյի Գաբրիելյանի դոկտորական ատենախոսության թեմաների հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ. Է.Ս. Գևորգյանը, ամբիոնի վարիչ՝ կ.գ.դ. պրոֆ. Պ.Հ. Վարդևանյանը, կենդանաբանության ամբիոնի վարիչ, կ.գ.դ. պրոֆ. Մ.Ս.Առաքելյանը, կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի դոցենտ, կ.գ.դ. Կ.Ա. Թոշունյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

- հաստատել մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչ, կ.գ.թ., դոցենտ Աննա Ֆելիքսի Կարապետյանի դոկտորական ատենախոսության թեման «Ողնաշարավորների օնտոգենեզի կայունության և բջջային հոմեոստազի գնահատումը էքստրեմալ իրավիճակներում», Գ.00.08 «Կենդանաբանություն, մակաբուժաբանություն, էկոլոգիա» մասնագիտությամբ:
- հաստատել կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. Լիլիթ Սերգեյի Գաբրիելյանի դոկտորական ատենախոսության թեման «Տիզիկաքիմիական տարբեր գործոնների ազդեցությունը ծիրանագույն բակտերիաներում և կանաչ միկրոօրգանիզմներում կենսազբաժնի ֆոտոարտադրության վրա», Գ.00.04 «Կենսաքիմիա» մասնագիտությամբ, գիտական խորհրդատու հաստատել կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Թոշունյանին:


3. ԼՄԵՑԻՆ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի հայցորդ Լուսինե Գասպարյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերահաստատման և գիտական ղեկավարի փոփոխման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ. Է.Ս. Գևորգյանը, կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի դոցենտ, կ.գ.դ. Կ.Ա. Թոշունյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ վերահաստատել Լուսինե Գասպարյանի թեկնածուական
ատենախոսության թեման՝ «Շրջակա միջավայրի, սննդի և տիրոջ օրգանիզմի
մանրէների համակեցությունների գենային կազմի ուսումնասիրման հաշվարկային
մեթոդների կատարելագործումը» Գ.00.04 «Կենսաքիմիա» մասնագիտությամբ և
գիտական ղեկավար հաստատել կ.գ.դ., դոցենտ Կ. Ա. Թռչունյանին:

Գիտական խորհրդի նախագահ՝

ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ.



Է.Ս. Գևորգյան

Գիտական խորհրդի քարտուղար՝
դոցենտ՝



Ի.Վ. Շահագիզյան